

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք!

ՀԱՄԱՄԻԱԿԻԹԵՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԱԳԱՆԴԵՍԻՆ

ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԽՈՐՁՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ,
ՄԵՔԵՆԱՏՐԱԿՏՈՐԱՅԻՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ,
ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՖԵՐՄԱՆԵՐԻ.
ԻՆՉՊԵՍ ՆԱՅԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԱՎՈՐՆԵՐԻ ՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐԻ
ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

63
Հ-21.

ՍԱԽԵԼԳԱՄԻ

1937 թ.

ԹԲԻԼԻՍԻ

30 JUL 2010

63
z-21 *այ*

Պրոլետարիատ, բոլոր յերկրների, միացեք!

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՅՈՒՅԱՀԱԿԱՆ ԴԵՍԻՆ
ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԽՈՐՑՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ,
ՄԵՔԵՆԱՏՐԱԿՏՈՐԱՅԻՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ,
ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՖԵՐՄԱՆՆԵՐԻ,
ԻՆՉՊԵՍ ՆԱՅԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ԱՌԱՋԱՎՈՐՆԵՐԻ ՈՒ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐԻ
ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ս Ա Խ Ե Լ Գ Ա Մ Ի

1937 թ.

ԹԲԻԼԻՍԻ

31 MAY 2013

14788

Պատասխանատու խմբագիր՝
[REDACTED]

Տել. խմբագիր՝
Ա. ԴՈՎԼԱԹՅԱՆ



259
37

Краснознаменная типография

им. А. Ф. Мясникова

Изд-ва ЦК КП(б)ГР.

„Заря Востока“

г. Тбилиси

Руставели, 36

Заказ № 2292. Главлит № 19707

Тираж—3000

ՀԱՄԱՄԻՒԹԵՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԱՆԴԵՄՈՒ ՄԱՍԻՆ

ԽՍՀ ՄԻՈՒԹՅԱՆ ՖՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ
ԽՈՐՀՐԴԻ ՅԵՎ ՀԱՄ. Կ(բ)Կ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԿՈՄԻՏԵՅԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսը լավագույն ձևով կազմակերպելու և Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսին մասնակցելու իրավունքի համար կողտնտեսությունների, խորհունտեսությունների, մեքենատրակտորային կայանների, կալտնտեսային ապրանքային ֆերմաների, ինչպես նաև գյուղատնտեսության առաջավորների ու կազմակերպիչների միջև սոցիալիստական մրցությունը լայնորեն ծավալելու նպատակով, ԽՍՀ Միության ժողովրդական կոմիսարների խորհուրդը և Համ. Կ(բ)Կ Կենտրոնական Կոմիտեն ՎՈՐՈՇՈՒՄ ԵՆ.

1. Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսի բացումը փոխադրել 1938 թվականի ոգոստոսի մեկին:

2. Հաստատել Ցուցահանդեսի Կոմիտեյի ներկայացրած վորոշումը՝ «Համամիութենական գյուղատնտեսությունների, խորհուտնեսությունների, մեքենատրակտորային կայանների, կոլտնտեսային ապրանեային ֆերմաների, ինչպես նաև գյուղատնտեսության առաջավորների ու կազմակերպիչների մասնակցության պայմանների մասին»:

3. Հանձնարարել ԽՍՀՄ Հողժողկոմատին, ԽՍՀՄ Կորհուտողկոմատին և ԽՍՀՄ Սննդարդյունաբերության Ժողկությունատին՝ մինչև այս տարիվ հունիսի 20-ը Ցուցահանդեսի Կոմիտեյի հաստատությանը ներկայացնել գյուղատնտեսության այն նյուղերի՝ Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսին մասնակցելու իրավունքի ցուցանիշները, վորոնիք քրվարկած չեն Ցուցահանդեսի Կոմիտեյի վերոհիշյալ վորոշման մեջ:

ԽՍՀ Միուրյան Ժողովրդական
Կոմիտեների Խորհրդի նախագահ՝

Վ. ՄՈՒՐՈՅԱՆ

Մոսկվա - Կրեմլ
14 Հունիսի, 1937 թ.

Համ. Կ(բ)Կ Կենտրոնական
Կոմիտեյի բարեուղար
Բ. ՍՏԱԼԻՆ

Հաստատված և ԽՍՀՄ Ժողովրդական
Սովիսարեների Խորհրդի յեվ Համ. Կ(բ)Կ
Կենտրոնական Կոմիտեյի կողմից

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ ԿՈՄԻՏԵՅԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսում առաջավոր կոլտնտեսությունների, խորհուտնտեսությունների, մեքենատրակտորային կայանների, կոլտնտեսային ապրանեային ֆերմաների նվաճումները, ինչպես և սոցիալիստական հողագործության ու անասնապահության առաջավորների և կագմակերպիչների աշխատանքի լավագույն նմուշները ցուցադրելու նպատակով՝ Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսի կոմիտեն ՎՈՐՈՇՈՒՄ Ե.

I.

ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսին կարող են մասնակցել.

- ա) կոլտնտեսությունները,
- բ) խորհանտեսությունները,
- գ) մեքենատրակտորային կայանները,
- դ) կոլտնտեսային-ապրանեային ֆերմաները,

յե) առաջավոր տրակտորիստները, կոմբայնավարները, վուշ գզողները, բամբակի, շաքարի ճակընդեղի, վուշ յերկաթելի և կանեփի մշակության ողակավարները, ձիապանները, կլթվորները, հովիվները, չորթապահները, խողապահները, ինչպես նաև թթունաբույծ, մեղվարույծ և շերամապահ՝ կոլտնտեսականները,

զ) բարձր բերք ստացած ազրոնոմները, այն անասնաբույժները և զոռտեխնիկները, վորոնք իրենց կողմից սպասարկվող՝ կոլտնտեսություններում և խորհանտեսություններում ձեռք են բերել անասունների ամենից բարձր մթերատվություն, այն սելեկցիոններները, վորոնք աճեցրել են անասունների բարձրաբժեք նոր տեսակներ և անասունների նոր բարձրարժեք ցեղեր, և այն փորձագետները, վորոնք իրենց աշխատանքով ապացուցել են հին արժեքավոր տեսակների խոշոր արժանիքները, այն աշխատողները, վորոնք լավագույն արդյունքներ են ձեռք բերել կենդանիների արհեստական բեղմնավորման գծով։

II.

ՀԱՅԱՀԱՍՏԻԿԱՅԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ԳԾՈՎ

Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսին մասնակցելու իրավունք վերապահել այն կոլտնտեսություններին և խորհանտեսություններին, վորոնք հացահատիկային մշակույթների բարձր և կայուն բերքի համար մղվող պայքարում 1937 և 1938 թվականներին հՀասնեն հետեւյալ նորմաներից վոչ ցածր բերքի։

ա) Բելոռուսական ԽՍՀ, Կարելական ԽՍՀ,

Հյուսիսային, Լենինգրադի, Կալինինի, Արեվմտյան, Իվանովյան, Յարոսլավլի և Մոսկվայի մարզերի այն կոլտնտեսությունները և խորհանտեսությունները, վորոնք 1937 և 1938 թվականներին հիմնական հացահատիկային մշակույթների ամբողջ ցանքատարածությունից կոտանան միջին հաշվունից կունից կամ հաշվունից առնվազն 16 ցենտներ մի հեկտարից, կամ հատիկային հիմնական մշակույթների բերքատվության ամբողջ պլանը կատարելիս, հետեւյալ մշակույթներից վորոնք մեկի ցանքագույն միջինացանքագույն տարածությունից կոտանան առնվազն։

աշնանացան ցորեն—մի հեկտարից 25 ցենտներ, գարնանացան ցորեն—մի հեկտարից 18 ցենտներ, աշնանացան հաճար—մի հեկտարից 25 ցենտներ, վարսակ—մի հեկտարից 20 ցենտներ։

բ) Ռէկրայնական ԽՍՀ բոլոր մարզերի, Մոլդավական և Ղրիմի ԽՍՀի, Ազով-Սևկծովյան յերկրամասի (առանց Սալսկի շրջանների և նախկին Հյուսիսային Դոնի ոկրուգի շրջանների), Ռոջոնիկիձեյի յերկրամասի (առանց Ստավրոպոլի շրջանների), կուրսկի, Վորոնեժի մարզերի, Դաղստանի, Կաբարդինո-Բալկարյան, Հյուսիսային-Ռուսիայի, Զեչենինգուշեթիայի և Խնդուշեթիայի ԽՍՀ այն կոլտնտեսությունները և խորհանտեսությունները, վորոնք 1937 և 1938 թվականներին հիմնական հացահատիկային մշակույթների ամբողջ ցանքատարածությունից կոտանան միջին հաշվունից կայուն բերքից տանվազն 15 ցենտներ, կամ թե հիմնական հացահատիկային մշակույթների բերքատվության պլանն ամբողջական առմամբ կատարելիս հետեւյալ մշակույթներից վորոնք մեկի ցանքագույն միջին տարածությունից կոտանան առնվազն։

աշնանացան ցորեն—մի հեկտարից 25 ցենտներ .
գարնանացան ցորեն—մի հեկտարից 15 ցենտներ .
գարի—մի հեկտարից 20 ցենտներ .
վարսակ—մի հեկտարից 18 ցենտներ .
յեղիպտացորեն (Հատիկ) —մի հեկտարից 35 ցենտներ :

գ) Կիրովի, Սվերդլովսկի, Գորկու, Արևելյան-Սիբիրի մարզերի, Կույբիչևի մարզի աջ ափի, Թաթարական, Չուվաշական, Մարիական, Մորդվայի, Բւրզուրյան, Յակուտյան, Բուրյաթ-Մոնղոլական ԽՍԻՀ, Կոմիի ԽՍԻՀ, Արեվմտյան-Սիբիրի յերկրամասի (առանց Կուլունդինյան շրջանների), Կրասնոյարսկի յերկրամասի (առանց Խակասական ինքնավար մարզի), Հեռավոր-Արեվելյան յերկրամասի և Ոմսկի մարզի Հյուսիսային շրջանների այն կոլտնտեսությունները և խորհուտեսությունները, վորոնք 1937 և 1938 թվականների Հիմնական Հացահատիկային մշակույթների ամբողջ տարածությունից կստանան միջին Հաշվով հեկտարից առնվազն 15 ցենտներ, կամ թե Հիմնական Հացահատիկային մշակույթների բերքատվության ամբողջ պլանը կատարելիս, հետեւյալ մշակույթներից վորեւ մեկի ցանքի պլանային տարածությունից կստանան առնվազն .

գարնանացան ցորեն—մի հեկտարից 15 ցենտներ, աշնանացան հաճար—մի հեկտարից 20 ցենտներ, գարի—մի հեկտարից 17 ցենտներ, վարսակ—մի հեկտարից 18 ցենտներ, կորեկ—մի հեկտարից 16 ցենտներ :
դ) Սարասովի, Որենբուրգի, Ստալինգրադի, Ռմսկի (առանց Հյուսիսային շրջանների), Կույբիչևի

(բացի աջ ափից), Զելյարինսկի մարզերի, Պովոլժյե-յի գերմանացիների ինքնավար հանրապետության, Ազով-Սևվծովյան յերկրամասի նախկին Հյուսիսային Դոնի ռկուտգի շրջանների և Սալսկի շրջանների, Որջոնիկիձեյի յերկրամասի Ստավրովուլի շրջանների, Բաշկիրական ԽՍԻՀ, Ղաղախական ԽՍՀ (առանց Հարավային Ղաղախստանի մարզի), Կալմիկյան ԽՍԻՀ, Խակասական ինքնավար մարզի և Արեվմտյան Սիբիրի յերկրամասի Կուլունդինյան շրջանների այն կոլտնտեսությունները և խորհուտեսությունները, վորոնք 1937 և 1938 թվականներին Հիմնական Հացահատիկային մշակույթների ամբողջ տարածությունից կստանան միջին հաշվով հեկտարից առնվազն 11 ցենտներ, կամ թե Հիմնական Հացահատիկային մշակույթների բերքատվության ամբողջ պլանը կատարելիս հետեւյալ մշակույթներից վորեւ մեկի ցանքի պլանային տարածությունից կստանան առնվազն .

գարնանացան ցորեն—մի հեկտարից 14 ցենտներ, գարի—մի հեկտարից 13 ցենտներ,
վարսակ—մի հեկտարից 13 ցենտներ,
կորեկ—մի հեկտարից 15 ցենտներ :

յէ) Ուզբեկական, Թուրքմենական, Տաջիկական, Կիրգիզական, Վրացական, Աղբքեջանյան, Հայկական ԽՍՀ և Հարավային Ղաղախստանի մարզի այն կոլտնտեսությունները և խորհուտեսությունները, վորոնք 1937 և 1938 թվականներին Հացահատիկային մշակույթների ամբողջ ցանքատարածության անջրդի (բողարային) Հողերում կստանան առնվազն 12 ցենտներ մի հեկտարից :

զ) Սահմանել, վոր 1937 և 1938 թվականներին

Եերկա վորոշմամբ նախատեսվածից վոչ պակաս քերք ձեռք քերող կոլտնսեսություններից ու խորհունսեսություններից ցուցահանդեսին մասնակցելու նախապատիվ իրավունք կտրվի այն տեսություններին, վորոնք նախորդ 2 տարիներում տվել են ամենաբարձրը քերք:

III.

ԱՌՎՈՒՅՑԻ ՅԵՎ ՅԵՐԵՔՆՈՒԿԻ ԳԾՈՎ

Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսին մասնակցելու իրավունք վերապահել այն կոլտնտեսություններին և խորհանտեսություններին, վորոնք 1937 և 1938 թվականներին ցանքերի ամրող պլանային տարածությունից կտանան հետելյալ բերքը.

Զրովի շրջաններում՝ առվույտի սերմից—միջին հաշվով առնվազն 4 ցենտներ մի հեկտարից և անջրդի շրջաններում՝ առնվազն 3 ցենտներ մի հեկտարից. յերեքնուրկի սերմից—միջին հաշվով առնվազն 3 ցենտներ մի հեկտարից:

IV.

ԲԱՄԲԱԿԻ ԳԾՈՎ

Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսին մասնակցելու իրավունք վերապահել այն կոլտնտեսություններին և խորհանտեսություններին, վորոնք բամբակի բարձր ու կայուն բերքի համար մզգող պայքարում 1936 թվականին ձեռք են բերել և 1937 թվականին ձեռք կբերեն.

ա) Ուղբեկական, Թուրքմենական և Տաջիկական ԽՍՀ—ամբողջ ցանքատարածությունից միջին հաշվով առնվազն 25 ցենտներ ամերիկյան բամբակ մի հեկտարից, կամ առնվազն 18 ցենտներ յեգիպտական բամբակ մի հեկտարից.

բ) մնացած հանրապետություններում— ամբողջ ցանքատարածությունից միջին հաշվով առնվազն 18 ցենտներ ամերիկյան բամբակ մի հեկտարից, կամ առնվազն 14 ցենտներ յեգիպտական բամբակ մի հեկտարից.

գ) անջրդի ամերիկյան բամբակի ամբողջ ցանքատարածությունից միջին հաշվով առնվազն 6 ցենտներ մի հեկտարից:

V.

ՎՈՒՅՑԻ ԳԾՈՎ

Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսին մասնակցելու իրավունք վերապահել այն կոլտնտեսություններին և խորհանտեսություններին, վորոնք վուշի բարձր և կայուն բերքի համար մզգող պայքարում 1936 թվականին ձեռք են բերել և 1937 թվականին ձեռք կբերեն.

ա) Բելոռուսական ԽՍՀ, Կոմիի ԽՍՀ, Հյուսիսասիրիային, Լենինգրադի, Կալինինի, Սրբվայան, Իվանովյան, Յարոսլավլի և Մոսկվայի մարզերում—ամբողջ ցանքատարածությունից միջին հաշվով առնվազն 5 ցենտներ վուշի բերք մի հեկտարից.

բ) մնացած հանրապետություններում, յերկրամասերում և մարզերում ամբողջ ցանքատարածու-

Թյունից միջին հաշվով առնվազն 4 ցենտներ վուշը թել մի հեկտարից:

VI.

ԿԱՆԵՓԻ ԳԾՈՎ

Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսին մասնակցելու իրավունք վերապահել այն կոլտնտեսություններին և խորհանություններին, վորոնք կանեփի բարձր և կայուն բերքի համար մըղվող պայքարում միջին ուստական կանեփի գծով 1936 թվականին ձեռք են բերել և 1937 թվականին ձեռք կբերեն ամբողջ տաճքատարածությունից միջին հաշվով առնվազն 5 ցենտներ մի հեկտարից, կամ հարավային կանեփի գծով՝ առնվազն 9 ցենտներ կանեփաբել մի հեկտարից:

VII.

ՇԱՔԱՐԻ ՃԱԿՆԴԵՂԻ ԳԾՈՎ

Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսին մասնակցելու իրավունք վերապահել այն կոլտնտեսություններին և խորհանություններին, վորոնք շաքարի ճակնդեղի բարձր և կայուն բերքի համար մղվող պայքարում 1936 թվականին ձեռք են բերել և 1937 թվականին ձեռք կբերեն.

ա) Ուկրաինական ԽՍՀ, Ազով-Սևվծովյան յերկրամասում, Որջոնիկիձեյի յերկրամասում, Վորոնեժի և Կուրսկի մարզերում—վողջ տարածությունից միջին հաշվով վոչ պակաս, քան 13 ցենտներ՝ հեկտարից.

բ) Ճակատական ԽՍՀ բոլոր մարզերում, Ազով-Սևվծովյան յերկրամասում, Կուրսկի և Վորոնեժի մարզերում վողջ տարածությունից միջին հաշվով վոչ պակաս, քան 250 ցենտներ՝ հեկտարից.

ը) մնացած հանրապետություններում, յերկրամասերում և մարզերում, բացի ջրովի շրջաններից—

վողջ տարածությունից միջին հաշվով վոչ պակաս, քան 200 ցենտներ՝ հեկտարից.

գ) Ջրովի շրջաններում—վողջ տարածությունից միջին հաշվով վոչ պակաս, քան 400 ցենտներ՝ հեկտարից.

VIII.

ԱՐԵՎԱԾԱՂԿԻ ԳԾՈՎ

Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսին մասնակցելու իրավունք վերապահել այն կոլտնտեսություններին և խորհանություններին, վորոնք արեվածաղկի բարձր և կայուն բերքի համար մղվող պայքարում 1936 թվականին ձեռք են բերել և 1937 թվականին ձեռք կբերեն՝

ա) Ուկրաինական ԽՍՀ, Ազով-Սևվծովյան յերկրամասում, Որջոնիկիձեյի յերկրամասում, Վորոնեժի և Կուրսկի մարզերում—վողջ տարածությունից միջին հաշվով վոչ պակաս, քան 13 ցենտներ՝ հեկտարից.

բ) Ճակատական ԽՍՀ, Պովոլժյեյի գերմանացիների հանրապետության մեջ, Բաշկիրական ԽՍՀ, Ստալինգրադի, Սարատովի և Կույբիշևի մարզերում—վողջ տարածությունից միջին հաշվով վոչ պակաս, քան 9 ցենտներ՝ հեկտարից:

IX.

ԾԽԱԽՈՏԻ ԳԾՈՎ

Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսին մասնակցելու իրավունք վերապահել այն կոլտնտեսություններին և խորհանություններին, վորոնք ծխախոտի բարձր և կայուն բերքի համար

մղվող պայքարում 1936 թվականին ձեռք են բերել և 1937 թվականին ձեռք կրերեն.

ա) Ուկրաինական, Վրացական, Ադրբեյջանյան, Հայկական, Ղազախական, Կիրգիզական ԽՍՀ, Ազու-Սեփծովյան յերկրամասում (բացի լեռնային շրջաններից) և Վորոնեժի մարզում—վող տարածությունից միջին հաշվով տրապիզոնների և տիկ-կուլակների գծով—վոչ պակաս, քան 14 ցենտներ՝ հեկտարից, սամսոնների գծով—վոչ պակաս, քան 10 ցենտներ՝ հեկտարից, իսկ Կիրգիզական ԽՍՀ՝ սամսոնների գը-ծով—հեկտարից վոչ պակաս, քան 13 ցենտներ.

բ) Ղրիմի ԽՍԻՀ հարավային մասում և Ազու-Սեփծովյան յերկրամասի լեռնային շրջաններում—վող տարածությունից միջին հաշվով՝ դյուրեկի գը-ծով—հեկտարից վոչ պակաս, քան 7 ցենտներ, ամե-րիկականների, տրապիզոնների և տիկ-կուլակների գծով՝ հեկտարից վոչ պակաս, քան 11 ցենտներ, իսկ Ղրիմի ԽՍԻՀ հյուսիսային մասում—դյուրեկների գը-ծով—հեկտարից վոչ պակաս, քան 13 ցենտներ, ամե-րիկականների և տրապիզոնների գծով—հեկտարից վոչ պակաս, քան 15 ցենտներ.

գ) ծխախոտի սիգարային և ամերիկական լայնա-տերեվ տեսակներ արտադրող կոլտնտեսություններին և խորհտնտեսություններին, վորոնք 1936 և 1937 թվականներին վող տարածությունից միջին հաշվով ստացած կլինեն հեկտարից վոչ պակաս՝ քան 17 ցենտ-ներ, բակուն տեսակի ծխախոտի գծով— հեկտարից վոչ պակաս, քան 22 ցենտներ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Ցուցահանդեսին մաս-նակցելու թույլտվություն ստացող կոլտնտեսու-

թյունների և խորհտնտեսությունների տեսակա-վոր բերքը պետք է լինի կոնտրակտացիոն պայ-մանագրերով՝ սահմանված ասորտիմենտից վոչ ցածր:

X.

ՄԱԽՈՐԿԱՅԻ ԳԾՈՎ

Համամիութենական գյուղատնտեսական ցուցա-հանդեսին մասնակցելու իրավունք վերապահել այն կոլտնտեսություններին և խորհտնտեսություններին, վորոնք մախորկայի բարձր և կայուն բերքի համար մղվող պայքարում 1936 թվականին ձեռք են բերել և 1937 թվականին ձեռք կրերեն.

ա) Ուկրաինական ԽՍՀ, Արևմտյան Սիբիրի յերկ-րամասում, Վորոնեժի և Կուրսկի մարզերում—վող սարածությունից միջին հաշվով վոչ պակաս, քան 32 ցենտներ՝ հեկտարից.

բ) մնացած հանրապետություններում, յերկրա-մասերում և մարզերում—վող տարածությունից մի-ջին հաշվով վոչ պակաս, քան 28 ցենտներ՝ հեկտա-րից:

XI.

ԿԱՐՏՈՖԻԼԻ ԳԾՈՎ

Համամիութենական գյուղատնտեսական ցուցա-հանդեսին մասնակցելու իրավունք վերապահել այն կոլտնտեսություններին և խորհտնտեսություններին, վորոնք կարտոֆիլի բարձր և կայուն բերքի համար մղվող պայքարում 1936 թվականին ձեռք են բերել և 1937 թվականին ձեռք կրերեն.

ա) Բելոռուսիայի ԽՍՀ, կարելիայի ԽՍՀ, Հյուսիսային, Լենինգրադի, Կալինինի, Արեվմտյան, Իվանովյան, Յարուլավլի, Մոսկվայի, Կուբակի, Վորոնեժի, Կիրովի, Սվերդլովսկի, Գորկու, Կիևի, Զերնիկովյան մարզերում, Թաթարական և Զուվաշական ԽՍՀ—վող տարածությունից միջին հաշվով հեկտարից վոչ պակաս, քան 225 ցենտներ.

բ) մնացած հանրապետություններում, յերկրամասերում և մարզերում—վող տարածությունից միջին հաշվով հեկտարից վոչ պակաս, քան 150 ցենտներ :

XII.

ԲԱՆՁԱՐԵՊԵՆԻ ԳԾՈՎ

Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսին մասնակցելու իրավունք վերապահել այն կոլտնտեսություններին և խորհանտեսություններին, վորոնք բանջարեղենի բարձր և կայուն բերքի համար մղվող պայքարում 1936 թվականին ձեռք են բերել և 1937 թվականին ձեռք կրերեն—վող տարածությունից .

Կաղամբ—հեկտարից վոչ պակաս, քան 350 ցենտներ .

վարունգ, պոմիլոր և սոխ—վոչ պակաս, քան 220 ցենտներ՝ հեկտարից :

XIII.

ԽԱՂՈՂԻ ԳԾՈՎ

Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսին մասնակցելու իրավունք վերապահել այն կոլտնտեսություններին և խորհանտեսություններին, վորոնք թեյի բարձր և կայուն բերքի համար մղվող պայքարում 1936 թվականին ձեռք են բերել և 1937 թվականին ձեռք կրերեն վող պտղաբեր տարածությունից միջին հաշվով հեկտարից վոչ պակաս, քան 2000 կիլոգրամ թեյի կանաչ տերեվ :

վող պայքարում 1936 թվականին ձեռք են բերել և 1937 թվականին ձեռք կրերեն .

ա) Ղրիմի ԽՍՀ—վող պտղաբեր տարածությունից ջրովի հողերում—վոչ պակաս, քան 70 ցենտներ՝ հեկտարից, անջրդի հողերում—վոչ պակաս, քան 35 ցենտներ՝ հեկտարից .

բ) մնացած հանրապետություններում, յերկրամասերում և մարզերում—վող պտղաբեր տարածությունից .

ջրովի հողերում—հեկտարից վոչ պակաս, քան 100 ցենտներ, անջրդի հողերում—հեկտարից վոչ պակաս, քան 50 ցենտներ :

XIV.

ԹԵՅԻ ԳԾՈՎ

Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսին մասնակցելու իրավունք վերապահել այն կոլտնտեսություններին և խորհանտեսություններին, վորոնք թեյի բարձր և կայուն բերքի համար մղվող պայքարում 1936 թվականին ձեռք են բերել և 1937 թվականին ձեռք կրերեն վող պտղաբեր տարածությունից միջին հաշվով հեկտարից վոչ պակաս, քան 2000 կիլոգրամ թեյի կանաչ տերեվ :

XV.

ՄԵՔԵՆԱՏՐԱԿՏՈՐԱՅԻՆ ԿԱՅԱՆՆԵՐԻ ԳԾՈՎ

Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսին մասնակցելու իրավունք վերապահել այն մեքենատրակտորային կայաններին, վորոնք իրենց կողմից սպասարկվող կոլտնտեսություններում 1937 թվականին կկատարեն տրակտորային աշխատանքների

սղանը, կիշեցնեն ինքնարժեքը սահմանված պլանից սկզբի, վորոնք 1936 թվականին ապահովել են և 1937 թվականին կապահովեն հետեւյալ տարեկան միջին արտադրանիքը՝

ա) ԶՏԶ («Ստալինեց») մի տրակտորով—վոչ պակաս, քան 2500 հեկտար,

բ) անիվավոր մի տրակտորով—վոչ պակաս, քան 900 հեկտար.

գ) մի կոմբայնով (փոխադրած 15 վոտնաչափանոցի)—վոչ պակաս, քան 500 հեկտար,

դ) վուշ գդող մեկ մեքենայով—վոչ պակաս, քան 80 հեկտար:

Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսին մասնակցելու նախապատճել իրավունք վերապահել այն մեքենատրակտորային կայաններին, վորոնք 1936 և 1937 թվականներին կունենան աշխատանքի՝ այս վորոշմամբ սահմանվածից վոչ ցածր ցուցանիշներ և 1938 թվականի (մինչև հուլիսի մեջը) գարնանացանի ու ցելի կամպանիայում ձեռք կբերեն հետեւյալ արտադրանքը.

ա) ԶՏԶ («Ստալինեց») մի տրակտորով—վոչ պակաս, քան 1000 հեկտար,

բ) անիվավոր մի տրակտորով—վոչ պակաս, քան 400 հեկտար:

ХVІ.

ԶԻՄԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ

Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսին մասնակցելու իրավունք վերապահել այն ձիարշատներություններին և անասնաբուծական կուտնայիշն-ապրանքային Փերմաներին, վորոնք 1936 և 1937 թվականներին կատարած կլինեն անասնաբուծության զարգացման պետական պլանը և ֆուրաժային կերով կերակրվող յուրաքանչյուր կովից կստանան տարեկան միջին կիլովորոշում մասնակիությամբ, վոչ պակաս, քան՝

բուծական ապրանքային Փերմաներին, վորոնք 1936 և 1937 թվականներին կատարած կլինեն անասնաբուծության զարգացման պլանը և ամեն մի տոկա 100 զամբիկից (մատակ ձի) ստացած կլինեն վոչ պակաս, քան 85 քուռակ:

ХVII.

ԽՈՇՈՐ ՅԵՂՋՅՈՒՐԱՎՈՐ ԱՆԱՄՈՒՆՆԵՐԻ ԳԾՈՎ

Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսին մասնակցելու իրավունք վերապահել այն խորհանութեան կուտնայիշներին և անասնաբուծական կուտնայիշն-ապրանքային Փերմաներին, վորոնք 1936 և 1937 թվականներին կատարած կլինեն անասնաբուծության զարգացման պետական պլանը և ֆուրաժային կերով կերակրվող յուրաքանչյուր կովից կստանան տարեկան միջին կիլովորոշում մասնակիությամբ, վոչ պակաս, քան՝

Անասնաբուծության ցեղերի խմբեր	ԽՍՀՄ յեկոսպահական մասնություն	ԽՍՀՄ ասիական մասնություն
-------------------------------	-------------------------------------	--------------------------------

Հողանդական (ոստիբիզյան), խոլմոգորան, զվից, սիմմենտալ, կարմրագերմանական, յարուլավլյան, տափելյան	3000 լիտր	2000 լիտր
Այդ ցեղերի մետինները	2700 լիտր	1800 լիտր
Կարմիր - գորբատյան, շորտգորնյան բեսուժելյան և տեղական կաթնատու անասուններ	2500 լիտր	1800 լիտր

Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսին մասնակցելու նախապատճեն իրավունք վերապահել այն խորհութեառեառթյուններին և կոլտնտեսային-ապրանքային ֆերմաներին, վորոնք 1936 և 1937 թվականներին կունենան աշխատանքի՝ ներկա վորոշմամբ սահմանվածից վոչ ցածր ցուցանիշներ և 1938 թվականին (մինչեւ հունիսի մեջ) կազմահովեն փուրածային կերով կերակրվող յուրաքանչյուր կովից ստացվող կաթի՝ վոչ պակաս, քան հետեւյալ քանակությունը.

Անասունների ցեղերի խմբեր	ԽՍՀՄ յեկառական մասում	ԽՍՀՄ ասիական մասում
Հոլանդական (ոստֆրիզյան), խոլմոգուցյան, շվից, սիմմենտալ, կարմրագերմանական, յարոսլավյան, տագելյան	1500 լիտր	1000 լիտր
Այդ ցեղերի մեխինները կարմիր-դորբատյան, շորտգորնյան բեսուժելյան և տեղական կաթնատու անասուններ	1350 լիտր	900 լիտր
	1250 լիտր	900 լիտր

Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսին մասնակցելու իրավունք վերապահել այն խորհութեառեառթյուններին և կոլտնտեսային-ապրանքային ֆերմաներին, վորոնք ապահովել են մինչեւ վեց ամսական հորթերի հետեւյալ որական միջին աճը.

Շորտգորնյան, գերեփորդյան, գորշուկրայնական, բեսուժելյան, շվից, սիմմենտալ, հոլանդական

և կամմիլյան ցեղերի հորթերի համար՝ 600 գրամից վոչ պակաս:

Վերոհիշյալ ցեղերի մետիսների հորթերի համար և խոլմոգորյան, տագելյան, յարոսլավյան, կարմը-րագերմանական, կարմիր-դորբատյան ցեղերի և ԽՍՀՄ ինստիտուտի յեկառական մասի տեղական անասունների հորթերի համար՝ առնվազն 550 գրամ:

ԽՍՀՄ ասիական մասի տեղական անասունների հորթերի համար՝ առնվազն 500 գրամ:

XVIII.

ՎՈՉԽԱՐԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ

Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսին մասնակցելու իրավունք վերապահել այն խորհութեառեառթյուններին և կոլտնտեսային-ապրանքային ֆերմաներին, վորոնք կատարած կլինեն անաբերության զարգացման պետական պլանը 1936 և 1937 թվականներին և մեկ չափահաս վոչխարից տարեկան կստանան միջին հաշվով հետեւյալ քանակությամբ բուրդ.

ա) նրագեղմ ցեղի վոչխարներից՝ առնվազն 6,5 կիլոգրամ.

բ) նրանց մետիսներից և «պրեկոս» ցեղի վոչխարներից՝ առնվազն 4 կիլոգրամ.

գ) «պրեկոս»-ի մետիսներից և կիսակոչտ բրդատու ցեղի վոչխարներից՝ առնվազն 3 և կես կիլոգրամ:

Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսին մասնակցելու իրավունք վերապահել այն

խորհանտեսություններին և կոլտնտէսային-ապրան-քային Փերմաներին, վորոնք կստանան.

ա) յուրաքանչյուր 100 մաքիլից՝ զուգավորելով նրագեղմ, կարակուլ և դմակավոր վոչխարների կամ մետիսների հետ՝ առնվազն 110 դառ.

բ) յուրաքանչյուր 100 մաքիլից՝ զուգավորելով ոռմանովյան ցեղի վոչխարների հետ՝ առնվազն 200 դառ.

գ) առաջին կարգի գառան մորթիների յելուսուը կարակուլ և մորթատու վոչխարներից՝ առնվազն 70 տոկոսով:

XIX.

ԽՈՉԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ

Համամիութենական գյուղատնտեսական ցուցա-հանդեսին մասնակցելու իրավունք վերապահել այն խորհանտեսություններին և կոլտնտեսային-ապրան-քային Փերմաներին, վորոնք 1936 և 1937 թվականներին կատարած կլինեն անասնաբուժության զարգացման պետական պլանը և ստացած կլինեն գործնական խոնկորներ (2-3 ամսական) տարվա սկզբում Փերմա-յում կամ խորհանտեսությունում յեղած 9 ամսակա-նից վեր յուրաքանչյուր մերուն խողից միջին հաշ-վով—

ԽՍՀՄ յեվրոպական մասում՝ առնվազն 17 հատ. ԽՍՀՄ ասիական մասում՝ առնվազն 13 հատ.

Համամիութենական գյուղատնտեսական ցուցա-հանդեսին մասնակցելու իրավունք վերապահել այն խորհանտեսություններին և կոլտնտեսային-ապրան-քային Փերմաներին, վորոնք տնտեսության մեջ յուրաքանչյուր ածող հավից ստացել են միջին հաշվով առնվազն 250 ձու:

սուլթյան մեջ յեղած 9 ամսականից վեր յուրաքան-չյուր մերուն խողից ստացած կլինեն խող-արտա-դրանք միջին հաշվով—

ԽՍՀՄ յեվրոպական մասում՝ առնվազն 900 կիլո-գրամ.

ԽՍՀՄ ասիական մասում՝ առնվազն 700 կիլո-գրամ:

XX.

ԹՐՉԱԲՈՒԾՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ

Համամիութենական գյուղատնտեսական ցուցա-հանդեսին մասնակցելու իրավունք վերապահել այն խորհանտեսություններին և կոլտնտեսային-թունա-բուժական Փերմաներին, վորոնք ամբողջ Փերմայի և խորհանտեսության գծով 1937 թվականին յուրաքան-չյուր ածող հավից ստացել են առնվազն 150 ձու, և այն կոլտնտեսականներին, վորոնք իրենց տնտեսության մեջ յուրաքանչյուր ածող հավից ստացել են միջին հաշվով առնվազն 250 ձու:

XXI.

ՇԵՐԱՄՄԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ

Համամիութենական գյուղատնտեսական ցուցա-հանդեսին մասնակցելու իրավունք վերապահել շերա-մաբուժական այն խորհանտեսություններին, վորոնք 1937 և 1938 թվականներին 25 գրամ կշող գրենայի յուրաքանչյուր տուփից բոժոժի բերք կստանան առ-նըվազն՝

Բաղդադի տեսակի և գարնանային հիբրիդներից 75 կիլոգրամ.

բակոլի տեսակից՝ 55 կիլոգրամ.

կրկնակի կերակրվող հիբրիդներից՝ 45 կիլոգրամ:

Համամիութենական գյուղատնտեսականի ցուցահանդեսին մասնակցելու իրավունք վերապահել Ուղրեկական, Թուրքմենական, Տաջիկական, Կիրգիզական, Վրացական, Հայկական և Ադրբեջանյան ԽՍՀ այն կոլտնտեսություններին, վորոնք 1937 և 1938 թվականներին ստացած կլինեն բոժոժի բերք—

Բաղդադի տեսակից և գարնանային հիբրիդներից՝ 60 կիլոգրամ.

մնացած հանրապետություններում, յերկրամասերում և մարզերում՝

Բաղդադի տեսակից և գարնանային հիբրիդներից՝ 55 կիլոգրամ.

ամկոլի տեսակից՝ 50 կիլոգրամ:

Համամիութենական գյուղատնտեսականի ցուցահանդեսին մասնակցելու իրավունք վերապահել Ուղրեկական, Թուրքմենական, Տաջիկական, Կիրգիզական, Վրացական, Հայկական և Ադրբեջանյան ԽՍՀ այն շերամաբույծ կոլտնտեսականներին, վորոնք 1937 և 1938 թվականներին ստացած կլինեն բոժոջի բերք—

Բաղդադի տեսակից՝ առնվազն 75 կիլոգրամ, մնացած բոլոր հանրապետություններում, յերկրամասերում և մարզերում՝ առնվազն 70 կիլոգրամ.

ամկոլի տեսակից՝ առնվազն 70 կիլոգրամ:

Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսին մասնակցելու իրավունք վերապահել այն շերամաբույծ կոլտնտեսականներին, վորոնք 1937 և 1938 թվականներին կստանան բոժոջի բերք—

Բաղդադի տեսակից՝ առնվազն 80 կիլոգրամ.

ամկոլի տեսակից՝ առնվազն 70 կիլոգրամ:

XXII.

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՎՈՐՆԵՐԸ

Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսին մասնակցելու իրավունք վերապահել սոցիալիստական գյուղատնտեսության այն առաջավորներին, վորոնք բարձր և կայուն բերքի, անասնաբուծության զարգացման ու բարելավման, տրակտորներով և գյուղատնտեսական բարդ մեքենաներով բարձր արտադրանք տալու համար մղմող պայքարում 1937 թվականին ձեռք կրերեն հետեւյալ ցուցանիշները.

1) ԶՏԶ «Ստալինեց»-ի վրա աշխատող այն տրակտորիստները, վորոնք մեկ հերթափոխի հաշվով կմշակեն առնվազն 2.000 հեկտար:

2) Անիվալոր տրակտորներով աշխատող այն տրակտորիստները, վորոնք մեկ հերթափոխի հաշվով կմշակեն առնվազն 700 հեկտար:

Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսին մասնակցելու նախապատճել իրավունք ընձեռել այն տրակտորիստներին, վորոնք 1937 թվականին աշխատանքի ցուցանիշներ կունենան ներկա վրացմամբ սահմանված ցուցանիշներից վոչ պակաս և 1938 թվականի դարնանացանի ու ցելի կամպանիայի լութացքում (մինչեւ հունիսի մեկը) մի հերթափոխում յուրաքանչյուր ԶՏԶ «Ստալինեց»-ով կմշակեն առնվազն 1000 հեկտար, իսկ անիվալոր տրակտորներով առնվազն 400 հեկտար:

3) Այն կոմբայնավարները, վորոնք սեզոնի ընթացքում (15 վոտնաշախ կոմբայնի հաշվով) կմշակեն առնվազն 800 հեկտար:

4) Այն վուշ գզողները, վորոնք վուշ գզող յուրաքանչյուր մեքենայով կմշակեն առնվազն 120 հեկտար:

5) Այն առաջավոր ողակավարները, վորոնք ստացել են առնվազն 10 ցենտներ 15 համարի և ավելի բարձր վորակի վուշի մանրաթելի բերք:

6) Այն առաջավոր ողակավարները, վորոնք 1936 և 1937 թվականներին մի հեկտարից ստացած կլիներամբակի բերք՝ միջին հաշվով—

ա) Ուղղեկական, Տաջիկական և Թուրքմենական ԽՍՀ ջրովի շրջաններում.

ամերիկյան բամբակ—առնվազն 80 ցենտներ.

յեգիպտական բամբակ—առնվազն 50 ցենտներ:

բ) Ջրովի այլ շրջաններում.

ամերիկյան բամբակ—առնվազն 50 ցենտներ.

յեգիպտական բամբակ—առնվազն 30 ցենտներ.

դ) ամերիկյան բամբակ—անջրդի շրջաններում՝ առնվազն 16 ցենտներ:

7) Այն առաջավոր ողակավարները, վորոնք մի հեկտարից միջին հաշվով ստացել են միջին-ոռուսական կանեփաթելի բերք առնվազն 11 ցենտներ, կամ հարավային կանեփ առնվազն 17 ցենտներ:

8) Այն առաջավոր ողակավարները, վորոնք մի հեկտարից միջին հաշվով ստացել են շաքարի ճակնդեղի բերք առնվազն 700 ցենտներ, իսկ ջրովի առնվազն 900 ցենտներ:

9) Այն ձիապանները, վորոնք յուրաքանչյուր 100 զամբիկից ստացել են առնվազն 90 քուռակի:

10) Այն կրվորները, վորոնք իրենց կողմից սպասարկվող կովկերի խմբում Փուրաժային կերով կերակըրվող յուրաքանչյուր կովից կստանան տարեկան միջին կիլո:

Անսպառների ցեղերի խմբեր	ԽՍՀՄ յեկրտոպական մասում	ԽՍՀՄ ասիստական մասում
-------------------------	-------------------------------	-----------------------------

ա) Հոլանդական (ոստֆրիզյան), խոլմոդրյան, շվից, սիմմենտալ, կարմրագերմանական, յարուսավլյան, տագիլյան

Առնվազն 4000 լիտր 3000 լիտր

բ) «ա» կետում հիշված ցեղերի մետափոները և կարմիր-դորբատյան, շորտոփրնյան, բեստուժելյան և տեղական կաթնասուռ անասուններ

Առնվազն 3500 լիտր 2500 լիտր

11) Այն հորթապահները, վորոնք ավելացրել են մինչեւ վեց ամսական հորթերի միջին որական կշեռը, առանց հորթերի անկում տալու.

ա) շորտգորնյան գերեփորդյան, գորշ-ուկրայնական, բեստուժելյան, շվից, սիմմենտալ, հոլանդական և կարմիրյան տեսակի հորթերի համար՝ առնըլվազն 750 գրամ.

բ) «ա» կետում հիշված ցեղի մետափոների, խոլմոդրյան, տափելյան, յարուսավլյան, կարմրագերմանական, կարմիր-դորբատյան ցեղերի և ԽՍՀՄ յեկ-

բուղական մասի տեղական անասունների հորթերի համար՝ առնվազն 700 դրամ։

գ) ԵՍՀՄ ասիական մասի տեղական անասունների հորթերի համար՝ առնվազն 600 դրամ։

12) Այն հովիվները, վորոնք մեկ հասուն վոչխարից միջին հաշվով տարեկան կստանան հետեւյալ քառակությամբ բուրդ։

ա) նրագեղմ ցեղի վոչխարներից՝ առնվազն յոթ կիլոդրամ։

բ) մետիսներից և «պրեկոս» ցեղի տեսակի վոչխարներից՝ 5 կիլոդրամ։

գ) «Ոլրեկոս» ցեղի մետիսներից և կիսակոչտ յուրդ ունեցող վոչխարներից 4 կիլոդրամ։

Այն հովիվները, վորոնք տարվա սկզբում յուրաքանչյուր 100 մաքից ստացել են գառնուկներ։

Նրագեղմ, կարակուլ ու դմակավոր ցեղի վոչխարների հետ զուգավորելուց առնվազն—130 դառ։

ռոմանովյան ցեղի վոչխարների հետ զուգավորելուց—առնվազն 250 դառ։

առաջին կարգի գառան մորթու յելուստը (կարակուլ և մորթատու վոչխարներից) առնվազն՝ 80 տոկոս։

13) Այն խոզապահները, վորոնք իրենց սպասարկման հանձնված 9 ամսականից վեր բոլոր մերուն խոզերից ստացել են գործնական խոճկորներ (2-3 ամսական) միջին հաշվով յուրաքանչյուր մերուն խոզից—

ԵՍՀՄ յեկրոպական մասում՝ առնվազն 22 հատ։
ԵՍՀՄ ասիական մասում՝ առնվազն 16 հատ, կամ

աարվա սկզբում յեղած 9 ամսականից վեր յուրաքանչյուր մերուն խոզից միջին հաշվով առնվազն մեկ տոններոգարտադրանք։

XXIII.

ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ ՄԱՍՆԱԿԻՑ-

ՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ա) Այն կոլտնտեսությունները և մեքենատրակտորային կայանները, առաջավոր կոլտնտեսականները, տրակտորիատները, կոմբայնավարները և վուշգուները, վորոնք ձեռք են բերել ներկա վորոշմամբ նախատեսված ցուցանիշներ, ինչպես և այն ագրոնոմները, անասնաբույժները, զոռտեխնիկները, սելեկցիոնները և փորձարարները, վորոնք ցանկանում են մասնակցել Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսին, այդ մասին հաղորդում են հանրապետությունների Հողժողկոմատներին, մարզային, յերկրային հողային վարչություններին, վորոնց պարտականությունն ե ստուգել ներկայացված անդեկությունները։

Այն խորհանտեսությունները և խորհանտեսությունների առաջավոր բանվորները, վորոնք ձեռք են բերել ներկա վորոշմամբ նախատեսված ցուցանիշները, ինչպես և խորհանտեսությունների այն ագրոնոմները, անասնաբույժները և զոռտեխնիկները, վորոնք ցանկանում են մասնակցել Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսին, այդ մասին հայտնում են իրենց ժողկոմատներին, վորոնց պարտականությունն ե ստուգել ներկայացված ցուցանիշները։

բ) Հանձնարարել հանրապետությունների Հողժող-

կոմատներին, մարզային և յերկրային հողային վարչություններին՝ ստուգելու կոլտնտեսությունների, խորհուտեսությունների, մեքենատրակտորային կայանների, կոլտնտեսային-ապրանքային ֆերմաների, գյուղատնտեսության առաջավորների և կազմակերպիչների հաղորդած տվյալները նրանց աշխատանքի արդյունքների մասին, և թեկնածուներին ներկայացնել ցուցահանդսի կոմիտեյին ի հաստատություն՝ համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսին մասնակցելու համար՝ ըստ նրանց 1937 թվականի աշխատանքի արդյունքների, 1938 թվականի փետրվարի մեկից վոչ ուշ, իսկ անասնաբուժության գծով 1938 թվականի մարտի մեկից վոչ ուշ, և ըստ նրանց 1938 թվականի աշխատանքի արդյունքների՝ 1938 թվականի ոգոսառոսի մեկից վոչ ուշ:

XXIV

ՄՐՑԱՆԱԿՆԵՐ ՅԵՎ ՊԱՐԳԵՎՆԵՐ

Ա.) Կոլտնտեսությունների, խորհուտեսությունների, մեքենատրակտորային կայանների և կոլտնտեսային-ապրանքային ֆերմաների աշխատանքի լավագույն նմուշների համար սահմանել պարզեցների հետեւյալ տեսակները.

- ա) վոսկե մեծ մեղալ—200 հատ
- բ) վոսկե փոքր մեղալ—300 հատ
- տ) արծաթե մեծ մեղալ—500 հատ
- դ) արծաթե փոքր մեղալ—1000 հատ
- յէ) առաջին աստիճանի գիպլոմ—2500 հատ
- զ) յերկրորդ աստիճանի գիպլոմ—5000 հատ,
- Վոսկե կամ արծաթե մեծ մեղալ ստացած կոլտըն-

տեսությունները, խորհուտեսությունները և մեքենատրակտորային կայանները վորպես պրեմիա ստանում են բեռնատար ավտոմեքենա, իսկ այդ կոլտընտեսությունների նախագահները, խորհուտեսությունների և մեքենատրակտորային կայանների դիրեկտորները՝ մարզատար ավտոմեքենա:

Բ) Սահմանել, վոր այն ագրոնոմները, անասնաբուժները, գոռատեխնիկները և մեխանիկները, վորոնք իրենց կազմակերպչական-տեխնիկական ոգնությամբ կապահովեն սահմանված պարզեվների ստացումը աշխատանքի լավագույն նմուշների համար իրենց սպասարկած կոլտնտեսությունների և կոլտնտեսային-ապրանքային ֆերմաների ամենամեծ քանակության կողմից՝ կամ պարզեվի ստացումը խորհուտեսության և մեքենատրակտորային կայանի կողմից, ինչպես և առաջավոր կոլտնտեսականները, սելեկցիոններները և փորձագետները կպարզեվածրվեն անհատապես ու կողմից առաջարկվեն գիպլոմներով:

Այն ագրոնոմներին, անասնաբուժներին, զոռականիկներին և մեխանիկներին, վորոնք իրենց կազմակերպչական տեխնիկական ոգնությամբ ապահովել են կոլտնտեսությունների, կոլտնտեսային-ապրանքային ֆերմաների, խորհուտեսությունների և մեքենատրակտորային կայանների մասնակցությունը Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսում, անհատապես հրավիրել ցուցահանդես՝ ի հաշիվ ցուցահանդեսային կոմիտեյի:

Գ) Սահմանել, վոր Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսի կոմիտեյի ատեսատաները կտրվեն ըստ Համամիութենական գյուղատնտեսական

4075
ցուցահանդեսին ներկայացրած լավագույն կենդանի-
ների:

★ ★ ★

Համամիութենական գյուղատնտեսական Ցուցա-
հանդեսի Կոմիտեն կոչ և անում բոլոր կոլտնտեսա-
կաններին և կոլոնտեսականուհիներին, խորհանտե-
սությունների և մեքենատրակտորային կայանների
բանվորներին ու բանվորուհիներին, գյուղատնտեսու-
թյան մասնագետներին ու գիտական աշխատողներին
լծկել Համամիութենական գյուղատնտեսական ցուցա-
հանդեսում սոցիալստական գյուղատնտեսության
մեջ Հաղթանակների ստուգատեսին մասնակցելու
իրավունքի համար մղվող պայքարին:

Համամիութենական գյուղատնտեսական
Ցուցահանդեսի Կոմիտեյի նախագահ՝
[REDACTED]



ՀՀ Ազգային գրադարան



NL0291451

14788

ԳԻՆԸ 35 ԿՈՊ.

37-5921

Об условиях участия колхозов, совхозов,
машинно-тракторных станций, колхозных
товарных ферм, а также передовиков и
организаторов сельского хозяйства
**на Всесоюзной сельскохозяйственной
выставке**
(На армянском языке)

САХЕЛГАМИ

1937

ТБИЛИСИ